

/Պատկերանիշ/

## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի հունվարի 11-ին,

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան՝  
հետևյալ կազմով՝

նախագահող դատավոր՝ Է.Վ. Հայրիյան,

դատավորներ՝ Ա.Մ. Աժիրբայիմովա, Ժ.Ն. Բայիշև, Դ.Գ. Կոլոս, Տ.Ն.  
Նեշատանա, Վ.Խ. Սեյտիմովա, Գ.Ա. Սկրիպկինա, Ա.Է. Թումանյան,  
Ա.Ա. Ֆեդորցով, Կ.Լ. Չայկա,

դատական նիստի քարտուղար՝ Վ.Վ. Վիննիկ,

ուսումնասիրելով գործի նյութերը, լսելով զեկուցող դատավորին,

դեկլարավելով Եվրասիական տնտեսական միության Դատարանի  
Կանոնադրության 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-75-րդ, 96-րդ, 98-  
րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության Դատարանի  
կանոնակարգի 14-րդ, 19-րդ, 72-րդ, 75-րդ, 85-րդ հոդվածներով,

ներկայացնում է սույն խորհրդատվական եզրակացությունը՝  
Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-  
ի պայմանագրի դրույթների պարզաբանման մասին Եվրասիական  
տնտեսական հանձնաժողովի դիմումի վերաբերյալ:

### 1. Դիմողի հարցը

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝  
Հանձնաժողով, ԵՏՀ) դիմել է Եվրասիական տնտեսական միության  
Դատարան (այսուհետ՝ Դատարան) Եվրասիական տնտեսական  
միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթները  
պարզաբանելու մասին դիմումով (այսուհետ՝ Պայմանագիր):

Հանձնաժողովի հայտարարության մեջ նշվում է, որ Գնումների  
կարգավորման կարգի մասին արձանագրության 11-րդ և 31-րդ կետերին  
հանապատասխան (Պայմանագրի թիվ 25 հավելված) (այսուհետ՝  
Արձանագրություն), Եվրասիական տնտեսական միության անդամ  
պետությունը բացառիկ դեպքերում իրավունք ունի գնումների մասին իր  
օրենսդրությամբ սահմանված կարգով սահմանելու,  
համապատասխանաբար, ապրանքների, աշխատանքների և  
ծառայությունների առանձին տեսակների գնումների իրականացման  
առանձնահատկությունները և ազգային ռեժիմից բացառումները

առավելագույնը 2 տարի ժամկետով:

Ինչպես հետևում է Հանձնաժողովի հայտարարությունից, Պայմանագրի և Արձանագրության «Պետական (համայնքային) գնումներ» խորագրով 22-րդ բաժնի դրույթներով առանձին տեսակի ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումների իրականացման առանձնահատկությունների և պետական (համայնքային) ոլորտի ազգային ռեժիմից բացառումների կրկնակի (բազմակի) սահմանման արգելք սահմանված չէ: Դրանց սահմանման պայմանը դրանց ներդրման դեպքերի բացառիկությունն է:

Հանձնաժողովը Միության անդամ պետությունների շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համատեղ աշխատանք է կատարել պետական (համայնքային) գնումների ոլորտում ազգային ռեժիմից բացառումը կրկնակի անգամ սահմանելու հնարավորության վերաբերյալ դիրքորոշումների մերձեցման հարցի ուղղությամբ, որի արդյունքում տվյալ հարցով միատեսակ մոտեցում չի մշակվել:

Հանձնաժողովը Դատարանին խնդրում է տրամադրել խորհրդատվական եզրակացություն Արձանագրության 11-րդ և 31-րդ կետերի դրույթների պարզաբանման վերաբերյալ՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից սահմանված կարգով առանձին տեսակի ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումների իրականացման առանձնահատկությունների և պետական (համայնքային) գնումների ոլորտում ազգային ռեժիմից բացառումների միապատիկ կամ բազմապատիկ սահմանման հնարավորության մասով:

Դատարանի Մեծ կոլեգիայի 2020 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ Հանձնաժողովի դիմումն ընդունվել է վարույթ:

## **2. Դատարանի եզրահանգումները**

**2.1.** Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա) 31-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ պայմանագիրը պետք է մեկնաբանվի բարեխղճորեն՝ այն սովորական իմաստին համապատասխան, որը պետք է տրվի պայմանագրի եզրույթներին իրենց համատեքստում, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակների լույսի ներքո:

Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթը սահմանում է, որ պայմանագրի մեկնաբանման նպատակով համատեքստը, բացի տեքստից, ներառյալ նախաբանը և հավելվածները, ընդգրկում է՝

ա) պայմանագրին առնչվող ցանկացած համաձայնություն, որը ձեռք

է բերվել բոլոր մասնակիցների միջև պայմանագրի կնքման հետ կապված.

բ) պայմանագրի կնքման կապակցությամբ մասնակիցներից մեկի կամ մի քանիսի կողմից կազմված և մյուս կողմերի կողմից որպես պայմանագրին վերաբերող փաստաթուղթ ընդունված ցանկացած փաստաթուղթ:

Դատարանի Մեծ պալատը նշում է, որ Պայմանագրի նախաբանն ամրագրում է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների տնտեսությունները ամրապնդելու և նրանց ներդաշնակ զարգացումն ու մերձեցումն ապահովելու, ինչպես նաև գործարար ակտիվության կայուն ան, հավասարակշռված առևտուր և բարեխղճ մրցակցություն երաշխավորելու ձգտումը:

Միության գործունեության հիմնական սկզբունքների թվում Պայմանագրի 3-րդ հոդվածը ներառում է փոխշահավետ համագործակցության, իրավահավասարության և անդամ պետությունների ազգային շահերը հաշվի առնվելու ապահովումը: Պայմանագրի 4-րդ հոդվածի դրույթները որպես Միության հիմնական նպատակներից մեկը սամանում են Միության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի ձևավորման ձգտումը:

Պետական (համայնքային) գնումների ոլորտի կարգավորման նպատակներն ու սկզբունքներն ամրագրված են Պայմանագրի 22-րդ բաժնում:

Պայմանագրի 88-րդ հոդվածի 1-ին կետով պետական գնումների ոլորտի կարգավորման նպատակներին և սկզբունքներին դասվում են՝ գնումների ոլորտում հարաբերությունների կարգավորումը գնումների մասին անդամ պետության օրենսդրությամբ և անդամ պետությունների միջազգային պայմանագրերով, անդամ պետություններին գնումների ոլորտում ազգային ռեժիմի տրամադրումը:

Սույն հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ անդամ պետություններում գնումներն իրականացվում են Արձանագրության համաձայն:

Արձանագրության 1-ին կետին համապատասխան սահմանվում է գնումների կարգավորման կարգը:

Արձանագրության՝ պարզաբանման ենթակա 11-րդ կետը ներառված է «Գնումների ոլորտի պահանջներ» խորագրով 2-րդ բաժնում, 31-րդ կետը՝ «Ազգային ռեժիմը և դրա ապահովման առանձնահատկությունները» խորագրով 3-րդ բաժնում:

Արձանագրության 11-րդ կետի համաձայն՝ անդամ պետությունն իրավունք ունի իր գնումների օրենսդրության մեջ միակողմանիորեն սահմանել գնումների առանձնահատկությունները՝ կապված հնարավորմատակարարների մասին տեղեկատվության գաղտնիության պահպանման անհրաժեշտության հետ, մինչև գնումների ավարտը,

ինչպես նաև բացառիկ դեպքերում առավելագույնը 2 տարի ժամկետով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների առանձին տեսակների գնումների իրականացման առանձնահատկությունները:

Նման առանձնահատկությունների սահմանման վերաբերյալ որոշումներն ու գործողությունները ընդունվում են Արձանագրության 32-րդ և 33-րդ կետերով նախատեսված կարգով:

Արձանագրության 31-րդ կետի դրույթը սահմանում է, որ անդամ պետությունն իրավունք ունի գնումների մասին իր օրենսդրությամբ սահմանված միակողմանի կարգով բացառիկ դեպքերում սահմանել բացառումներ ազգային ռեժիմից առավելագույնը 2 տարի ժամկետով:

**2.2.** Պարզաբանման նպատակով Դատարանի Մեծ կոլեգիան կիրառում է «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից պետական (համայնքային) գնումների ոլորտի ազգային ռեժիմից բացառումներ սահմանելու մասին ակտերի ընդունման մասին անդամ պետությունների ծանուցագրերը, նման ակտերի չեղարկման վերաբերյալ անդամ պետությունների դիմումները ԵՏՀ կողմից քննարկելու, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից նման ակտերի չեղարկման անհրաժեշտության մասին որոշումներ ընդունելու կարգը», որը հաստատվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի № 69 որոշմամբ (այսուհետ՝ Կարգ):

Կարգը սահմանում է Հանձնաժողովի կողմից պետական (համայնքային) գնումների ոլորտում առանձնահատկություններ և ազգային ռեժիմից բացառություններ սահմանելու վերաբերյալ անդամ պետությունների ակտերի ծանուցումների քննարկումը. ակտերի վերացման վերաբերյալ դիմումների քննարկումը. խորհրդակցություններ անցկացնելը, ակտերը չեղարկելու անհրաժեշտության վերաբերյալ որոշումներ կայացնելը:

Կարգը սահմանում է Հանձնաժողովի կողմից երեք տեսակի ծանուցումների քննարկման ընթացակարգը՝

1. Ազգային ռեժիմից բացառումներ սահմանելու վերաբերյալ ակտեր ընդունելու մասին:

2. Անդամ պետությունների կողմից գնումների իրականացման առանձնահատկություններ սահմանելու վերաբերյալ ակտեր ընդունելու մասին:

3. Որոշակի հնարավոր մատակարարից կոնկրետ գնում իրականացնելու վերաբերյալ ակտեր ընդունելու մասին:

Կարգի 1-ին և 2-րդ հավելվածները պարունակում են Ակտի ընդունման և ակտը չեղարկելու վերաբերյալ դիմումի անհրաժեշտությունը հիմնավորելու համար ներկայացվող, ինչպես նաև ակտի չեղարկման անհրաժեշտության մասին որոշում ընդունելու համար հիմքերի առկայության կամ բացակայության վերաբերյալ

եզրակացություններ նախապատրաստելու համար ԵՏՀ կողմից օգտագործվող ցուցանիշների և տեղեկությունների ցանկը (այսուհետ՝ Ցանկ):

**2.3.** Արձանագրության 2-րդ կետը ազգային ռեժիմը սահմանում է որպես այսպիսի ռեժիմ, որը նախատեսում է, որ յուրաքանչյուր անդամ պետություն գնումների նպատակով անդամ պետությունների տարածքներից ծագող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների, անդամ պետությունների հնարավոր մատակարարների և անդամ պետությունների՝ նման ապրանքներ առաջարկող, աշխատանքներ կատարող կամ ծառայություններ մատուցող մատակարարների համար ապահովում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան իր անդամ պետության տարածքից ծագող ապրանքներին, աշխատանքներին և ծառայություններին, ինչպես նաև իր պետության հնարավոր մատակարարներին կամ նման ապրանքներ առաջարկող, աշխատանքներ կատարող և ծառայություններ մատուցող մատակարարներին տրամադրվող ռեժիմը:

Կարգի 6-րդ կետին համապատասխան՝ ազգային ռեժիմից բացառումը որևէ անդամ պետության կողմից այլ անդամ պետությունների հնարավոր մատակարարների (կապալառուների, կատարողների) համար կոնկրետ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պետական գնումների ընթացակարգերին մասնակցության սահմանափակումն է կամ տնտեսության որոշ ոլորտներում իրականացվող պետական գնումների հասանելիության սահմանափակումը:

Կարգի 8-րդ կետի համաձայն՝ լիազորված մարմնի կողմից Հանձնաժողովին, անդամ պետությունների կառավարություններին և լիազորված մարմիններին ուղարկվող ակտի մասին ծանուցմանը կից, ի թիվս այլոց, ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը (նյութերը) և տեղեկությունները՝

«բ) ակտի ընդունման անհրաժեշտության հիմնավորումը, որը, այդ թվում, ներառում է հետևյալ տեղեկությունները՝

դեպքի բացառիկության հիմնավորումը, ներառյալ Կարգի 9-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը, եթե ընդունվող ակտը սահմանում է առանձին տեսակի ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պետական գնումների իրականացման առանձնահատկությունները կամ ազգային ռեժիմից բացառումները: Ընդ որում, հղումը Կարգի 9-րդ կետի որևէ ենթակետին բավարար հանգամանք չէ դեպքի բացառիկությունը հիմնավորելու համար»:

Այն հատկանիշների նշումները, որոնց հիման վրա կատարվում է Կարգի 9-րդ կետով սահմանված դեպքերի բացառիկության գնահատումն ու դասակարգումը, Կարգի 8-րդ կետի «բ» ենթակետի ուժով բավարար հանգամանք չեն հանդիսանում դեպքի

բացառիկությունը հիմնավորելու համար:

Կարգի 11-րդ կետի համաձայն՝ ակտի ընդունման անհրաժեշտությունը, այդ թվում՝ դեպքի բացառիկությունը հիմնավորելու, առանձին տեսակի ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պետական գնումների իրականացման առանձնահատկությունները կամ ազգային ռեժիմից բացառումները սահմանելու նպատակով ակտի մասին ծանուցման հետ կարող են ներկայացվել տեղեկություններ ակտի մասին ծանուցումն ուղարկող անդամ պետության վերաբերյալ՝ համաձայն № 2 հավելվածի:

Նշված № 2 հավելվածը պարունակում է անդամ պետությունների կողմից ներկայացվող 10 մակրոտնտեսական ցուցանիշների և տեղեկությունների ցանկ, որոնց թվում են նաև ապրանքի (աշխատանքի, ծառայության) ստեղծիչի բնութագրերը, որոնք թույլ են տալիս եզրակացություն անել ազգային ռեժիմից բացառման թույլատրելիության և անհրաժեշտության մասին:

Դատարանի Մեծ կոլեգիան գտնում է, որ Պայմանագրի 88-րդ հոդվածի, Արձանագրության 11-րդ և 31-րդ կետերի դրույթների փոխկապակցված ընթերցումից հետևում է, որ Արձանագրության 11-րդ և 31-րդ կետերի նորմերը չեն պարունակում Միության անդամ պետությունների կողմից առանձին տեսակի ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումների իրականացման առանձնահատկությունների և առավելագույնը 2 տարի ժամկետով ազգային ռեժիմից բացառումների սահմանման միանվագության նորմատիվ ամրագրում:

Միջազգային պայմանագրի տվյալ նորմով Միության անդամ պետություններին տրված է նման առանձնահատկությունների բազմակի սահմանման իրավունք:

Դատարանի Մեծ կոլեգիան նշում է, որ «բացառիկ դեպքերում» արտահայտությունը նույնական չէ պետական (համայնքային) գնումներ իրականացնելու դեպքում անդամ պետության կողմից առանձնահատկությունների և ազգային ռեժիմից բացառումների սահմանումների միանվագության և թվի սահմանափակման հասկացություններին:

Արձանագրության 11-րդ և 31-րդ կետերի նորմերով տրված իրավասություններն իրականացնելու անդամ պետության իրավունքը անվերապահ է, պատկանում է ազգային իրավասությանը և չի կարող սահմանափակվել ինչպես այնպիսի ապրանքի գնումներ կատարելիս առանձնահատկությունների և ազգային ռեժիմից բացառումների կիրառման թվի նկատմամբ, որը նախկինում արդեն եղել է առանձնահատկությունների և ազգային ռեժիմից բացառումների սահմանման առարկա, այնպես էլ այլ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների նկատմամբ:

Անդամ պետությունները հիմնավորում են դեպքերի բացառիկությունը Արձանագրության 11-րդ և 31-րդ կետերին համապատասխան՝ առանձին տեսակի ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումների իրականացման առանձնահատկությունները առավելագույնը 2 տարի ժամկետով, ինչպես նաև ազգային ռեժիմից բացառումները առավելագույնը 2 տարի ժամկետով սահմանելու համար՝ հաշվի առնելով Կարգի 9-րդ կետի և № 2 հավելվածի դրույթները:

Տվյալ եզրահանգումը համապատասխանում է Հանձնաժողովի կողմից Միության անդամ պետություններում Արձանագրության 11-րդ և 31-րդ կետերի դրույթների կիրառման պրակտիկայի մշտադիտարկման արդյունքներին՝ առանձնահատկությունների և բացառումների սահմանման բազմակիության մասով, որը Հանձնաժողովի կողմից ներկայացվել է Դատարանի պահանջով: 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գնումների կրկնակի առանձնահատկությունները և ազգային ռեժիմից բացառումները սահմանվել են անդամ պետությունների 29 ակտով. Բելառուսի Հանրապետությունում ընդունվել է 9 ակտ, Ռուսաստանի Դաշնությունում՝ 20 ակտ: Մնացած անդամ պետությունները նույնպես կողմ են նման առանձնահատկությունների և ազգային ռեժիմից բացառումների բազմակի սահմանման դիրքորոշմանը:

Արձանագրության 11-րդ և 31-րդ կետերի այլ մեկնարանումը անդամ պետությանը գրկում է որևէ բացառիկ դեպքի ի հայտ գալու ժամանակ առանձնահատկությունները կիրառելուց կամ ազգային ռեժիմից բացառումից հետո մեկ այլ դեպքի ի հայտ գալու կամ նույն դեպքի կրկնության դեպքում համապատասխան միջոցներ կիրառելու և բացառիկ իրավիճակին համարժեք արձագանքելու հնարավորությունից, որը կարող է հանգեցնել բացասական հետևանքների՝ միաժամանակ խախտելով ողջամիտ պարիտետը ընդհանուր տնտեսական տարածք կառուցելու նպատակի և անդամ պետության ազգային շահերը հաշվի առնելու միջև:

**2.4.** Դատարանի Մեծ կոլեգիան արձանագրում է, որ Արձանագրության 11-րդ, 31-րդ կետերի հիման վրա առանձնահատկություններ և բացառումներ սահմանելու անդամ պետության ինքնիշխան իրավունքին համապատասխանում է դրանց սահմանման մասին ծանուցում ստանալու դեպքում առանց դրանց անտեսման խորհրդակցությունների անցկացում նախաձեռնելու մեկ այլ անդամ պետության իրավունքը: Տվյալ իրավունքն իրականացվում է մինչև առանձնահատկությունները և բացառումները սահմանող ակտի ընդունումը դրանց սահմանման մասին ծանուցում ստանալու դեպքում: Անցկացվող խորհրդակցությունների նպատակն է կիրառվող բացառումների և առանձնահատկությունների վերաբերյալ դրանց

մասնակից անդամ պետությունների դիրքորոշումների մերձեցումը:

Անդամ պետությունը առանձնահատկություններն ու բացառումները սահմանող ակտի ընդունումից հետո իրավունք ունի դիմում ուղարկելու Հանձնաժողով՝ անդամ պետությունների կողմից պետական գնումների իրականացման առանձնահատկությունների և ազգային ռեժիմից բացառումների սահմանման մասին ակտերը վերացնելու անհրաժեշտության մասին:

Հանձնաժողովն առանձնահատկություններ կամ բացառումներ սահմանող ակտի մասին ծանուցումը քննարկելիս գնահատում է Կարգի 8-րդ, 10-րդ և 11-րդ կետերում նշված փաստաթղթերի (նյութերի) և տեղեկությունների առկայությունը, առանձնահատկությունների կամ ազգային ռեժիմից բացառումների գործողության ժամկետի, լիազորված մարմիններին ակտի մասին ծանուցումն ուղարկելու ժամկետի, Արձանագրության 11-րդ և 31-րդ կետերին համապատասխան ակտի ընդունման հիմնավորման առկայության և գործի բացառիկության առումով Արձանագրության 11-րդ, 31-րդ և 32-րդ կետերի դրույթներին դրանց համապատասխանությունը: Նման գնահատման արդյունքներով կազմվում է եզրակացություն, որն ուղարկվում է անդամ պետությունների կառավարություններին և նրանց լիազորված մարմիններին:

Դիմումի քննարկման արդյունքներով Հանձնաժողովը խորհրդատվությունների անցկացման օրվանից և (կամ) Կարգի 24-րդ կետում նշված ժամկետների լրանալուց հետո 10 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում եզրակացություն է նախապատրաստում ակտը վերացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու համար հիմքերի առկայության կամ բացակայության մասին, որը ներառում է Կարգի 21-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված վերլուծության արդյունքները: Մասնավորապես, նման վերլուծությունը կատարվում է Կարգի № 2 հավելվածով նախատեսված ցուցանիշների և տեղեկությունների վերաբերյալ (ընդ որում, այս ցուցանիշներից որևէ մեկը առանձին վերցրած բավարար չէ վերլուծություն կատարելու համար), այդ թվում՝ ակտի ընդունման հետևանքով անդամ պետությունների տնտեսությունների համար բացասական տնտեսական հետևանքների, ակտի ընդունման հետևանքով մեկ կամ մի քանի անդամ պետության տնտեսության ոլորտին հասցված վնասի մասով:

Հաշվի առնելով Պայմանագրի 97-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառման պարզաբանման վերաբերյալ Դատարանի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 7-ի խորհրդատվական եզրակացության մեջ ձևակերպված մոտեցումը, Հանձնաժողովի կողմից իր լիազորությունների իրականացումը հնարավոր է համաչափության սկզբունքի՝ որպես Միության իրավունքի ընդհանուր սկզբունքներից մեկի հետ սերտ փոխկապակցմամբ:



Համաչափության սկզբունքի պահպանման նպատակով պետք է պարզվի, թե արդյոք սահմանափակումը համահունչ է առաջադրված խնդրին հասնելուն, և արդյոք այն նախատեսում է միայն այն, ինչ անհրաժեշտ է դրան հասնելու համար:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրահանգում ձևակերպել, որ համաչափության թեստը ներառում է երկու բաղադրիչի ստուգում՝

արդյո՞ք առաջարկվող միջոցը (մասնավորապես՝ առանձնահատկությունների, ազգային ռեժիմից բացառումների սահմանումը) կոնկրետ իրավիճակում իսկապես կնպաստի առաջադրված խնդիրներից մեկի լուծմանը. առաջադրված նպատակին հասնելու համար նշված միջոցի համաչափության սահմանները:

Համաչափության թեստի երկրորդ բաղադրիչը ենթադրում է նույն նպատակին հասնելու պակաս սահմանափակող եղանակների բացակայության հաստատում:

**2.5.** Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանի Մեծ կոլեգիան հիմնավորված է գտնում դիմումատուի հարցի վերաբերյալ հետևյալ պարզաբանումը տրամադրելը:

Գնումների կարգավորման կարգի մասին արձանագրության (Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի № 25 հավելված) 11-րդ և 31-րդ կետերի դրույթները չեն նախատեսում Եվրասիական միության անդամ պետությունների կողմից առանձին տեսակի ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումների իրականացման առանձնահատկությունների և պետական (համայնքային) գնումների ոլորտում ազգային ռեժիմից բացառումների սահմանման միանվագություն:

### **3. Եզրափակիչ դրույթներ**

Խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմողին:

Խորհրդատվական եզրակացության տեքստը հրապարակել Դատարանի պաշտոնական համացանցային կայքում:

Նախագահող, զեկուցող դատավոր  
Դատավորներ՝

Է.Վ.Հայրիյան  
Ա.Մ. Աժիբրայիմովա  
Ժ.Ն.Բայիշև  
Դ.Գ. Կոլոս  
Տ.Ն.Նեշատանա  
Վ.Խ.Սեյտիմովա  
Գ.Ա.Սկրիպկինա

Ա.Է. Թումանյան

Ա.Ա.Ֆեդորցով

Կ.Լ.Չայկա